«Նոր ժամանակների կրթություն >>ՀԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՈՒսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ՝սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Հեղինակ – Արմինե Պետրոսյան

Ղեկավար – Անահիտ Իսպիրյան

Երևան**2023**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն—----------3
ՈՒսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ՝սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում
1.1Միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունները կրտսեր դպրոցականի կյանքում---------- **5**

1.2 Ծնողների ներգրավումը դպրոցական կյանքի մեջ —----------8

1.3 Ծնողական ժողովների կարևորությունը սովորողների կրթության գործում..11

1.4 Հետազոտության ընթացքը—----------13
Եզրակացություն —----------16
Գրականության ցանկ —----------18
Հավելված 1 —----------19
Հավելված 2----------20
Հավելված 3 —---------- 21

Ներածություն

Թեմայի արդիականությունը Հասարակության կյանքում իրականացնող քաղաքական, սոցիալ-տնտեսական փոփոխությունները, բարոյական հարաբերություններում և արժեհնարմատիվային որորտում առկա տեղաշարժերը հանրակրթությանն առաջադրում են նոր խնդիրներ՝ կապված աճող սերնդի կողմից ազգային և համամարդկային փորձի յուրացման անհրաժեշտության, քաղաքացիական որակների ձևավորման, միջմշակութային հաղորդակցման, տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների տիրապետման, արժեքային կողմնորոշումների ձևավորման հետ:

Սովորողների սոցիալականացման, դաստիարակության, զարգացման ու կայացման գործում ամենաազդեցիկ դերը խաղում են երկու սոցիալական ինստիտուտներ՝ ընտանիքը և դպրոցը:
Դպրոցը երեխայի կյանքում ամենակարևոր պատասխանատու անցումային շրջանն է: Այն նրա համար բացում է մի նոր աշխարհ, ուր կան ուսուցիչներ, կանոններ, դասագրքեր, պարտականություններ, իրավունք...ԵՎ այդ ամենն այնքան էլ սրտամոտ չէ երեխային, առավել ևս անհասկանալի է նրա համար: Երեխայի անցումային շրջանի և հետագա բարեկիրթ քաղաքացի դաստիարակելու համար խիստ կարևորում է ուսուցչի դերը: Մանկավարժի ազդեցությունը հսկայական է նոր մարդու անձնային որակների ձևավերման գործում: ՈՒսուցիչը ոչ միայն ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպիչն է, այլև իր սաների բարեկամ ու աջակիցը, ընկերն ու խորհրդատուն: Նա նրանց ուղղորդում է նոր կյանքի ուղիով:

Մեր օրերում փոխվել են ոչ միայն ծնող-երեխա փոխհարաբերությունների բնույթը, այլ նաև աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ, ուսուցիչ-ծնող փոխհարաբերությունները:

Քանի որ ես դասվար եմ և իմ մոտ սովորողը հենց կրտսեր դպրոցական է, կրտսեր դպրոցական տարիքում ամենից հաճախ դիտվում են ուսուցչի, դասընկերների և ընտանիքի անդամների հետ ունեցած փոխհարաբերությունների բնույթի հետ կապված բարդություններ: Կրտսեր դպրոցականի մոտ ձևավորվում են կոլեկտիվում աշխատելու հմտություններ:

Երեխան, հայտնվելով նոր սոցիալական իրավիճակում, փորձում է ակտիվորեն հարմարվել դրան: Դպրոց ընդունվելն ու ուսումնական առաջին շրջանը փոփոխություններ են առաջացնում երեխայի ողջ կենսակերպում և գործունեության մեջ: Կրտսեր դպրոցականը մտնում է նոր հարաբերությունների մեջ և ստիպված է իրականացնել դպրոցականից սպասվող պահանջները, ինչը իր հերթին գերծանրաբեռնում է երեխային:

Հարմարման ընթացքում երեխայի մոտ կարող են ձևավորվել վարքային խնդիրներ, որոնք ազդանշում են մեծահասակներին հարմարման դժվար ընթացքի մասին: Հիմնականում դրանք ագրեսիվ և տագնապային դրսևորումներն են:

Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության և կրթության գործընթացում:

Այդ պատճառով էլ ընտանիքի հետ աշխատանքն անհրաժեշտ է կառուցել տարբերակված, չպարտադրել փոխներգործության միատեսակ ձևեր, այլ կողմնորոշվել դեպի ծնողների պահանջմունքները, ընտանիքի և ընտանեկան դաստիարակության յուրահատկությունները, ծնողներին աստիճանաբար ներգրավել դպրոցի, դասարանի և իր երեխայի գործերում:

Թեմայի նպատակը

- Կապ ստեղծել դպրոցի և սովորողի ծնողի միջև : .

- Ներգրավել ծնողին դպրոցական գործընթացին, համագործակցել ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ, ներգրավել դասարանական, համադպրոցական, արտադասարանական միջոցառումներին:
- Բարենպաստ պայմաններ ստեղծել սովորողի լիարժեք սոցիալական զարգացման, դաստիարակության և կրթության համար:
- Ցույց տալ ծնող- ուսուցիչ արդյունավետ փոխգործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության ու դաստիարակության գործընթացում

Թեմայի խնդիրներն են՝

- Ինչպե՞ս ներգրավել ծնողներին դպրոցներում ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման պրոցեսին:
- Ինչպե՞ս ներգրավել ծնողներին իրենց երեխաների կրթությանը վերաբերող հարցերի մասին որոշումներ կայացնելու գործին

ՈՒսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ՝սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

1.1 Միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունները կրտսեր դպրոցականի կյանքում

Ընտանիքը, որպես կրթական կոլեկտիվ, ունի մի շարք առանձնահատկություններ: Առաջին հերթին այն կոլեկտիվ է՝ միավորված ոչ միայն ընդհանուր նպատակով, այլև ազգակցական 5 կապերով: Ծնողական

զգացմունքները, ծնողական սերը մի տեսակ կատալիզատոր են, որն արագացնում է անձի զարգացումը: Սա համեմատաբար կայուն թիմ է, որտեղ շփումը տեղի է ունենում անընդհատ, հնարավոր ամենալայն տարածքներում, տարբեր գործողություններում:

Ընտանիքում է դրվում և ապահովվում անհատականության կարևորագույն գծերի դաստիարակությունը: Դրանում սովորողը ստանում է աշխարհի մասին առաջին պատկերացումները, այստեղ ձևավորվում է հասկացությունների, հայացքների զգացմունքների, սովորությունների ֆոնդը, որն ընկած է անհատի բարոյական ձևավորման հիմքում:Միայն ընտանիքում է հնարավոր ստեղծել և վերարտադրել իսկապես ազգակցական հարաբերությունների մշակույթ, տիրապետել սոցիալական կարևորագույն դերերին, ձևավորել մշակույթ, հարստացնել բարոյական փորձը: Ընտանիքը կոչված է ապահովելու երեխայի կյանքի ողջամիտ կազմակերպումը, օգնելու յուրացնել ավագ սերունդների կյանքի և աշխատանքի դրական փորձը, կուտակել գործունեության , սովորությունների, հարաբերությունների արժեքավոր անհատական փորձ:

Քանի որ ես լինելով դասվար , վերցնում եմ կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները դպրոց-ընտանիք հարաբերություններում:

Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է,այն ընդգրկում է 6-7-ից մինչ 10 տարեկան ընկած ժամանակահատվածը: Այս տարիքում տեղի է ունենում մի շարք նշանակալի փոփոխություններ՝ ինչպես ֆիզիոլոգիական, այնպես էլ սոցիալ-հոգեբանական առումներով: Հենց այս փուլում է, որ երեխայի մոտ ձևավորվում են այնպիսի անձնային որակներ, ինչպիսիք են ինքնուրույնությունը և աշխատասիրությունը, ինչն առավելապես պայմանավորված է առաջատար գործունեության փոփոխության՝ խաղից ուսուցման անցման գործոնով:

Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է խաղալու պահանջմունքը:Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը,ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Ուսուցիչը կարող է հմտորեն կազմակերպել երեխաների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական վարժություններ, որոնց ընթացքում երեխան լիցքաթափվում է և կարողանում արդյունավետ շարունակել ուսումը:

Ուսումնական գործունեությունը փոխում է երեխայի զգացմունքների բովանդակությունը, նրանք դառնում են ավելի գիտակցված և զսպված: Դրական զգացմունքները այժմ առաջանում են որ միայն հաճելի խաղ խաղալուց և հաճույք ստանալուց, այլ որոշակի մտավոր գործունեություն կատարելուց, դժվարություններ հաղթահարելուց, մրցակցությունից: Երեխան ծանոթանում է կյանքի տարբեր սոցիալական դերերի, նրա մոտ զարգանում են բարոյական զգացմունքները: Տեղի է ունենում առկա բարոյական նորմերի, կանոնների ինտենսիվ ներքնայնացնում: Այս գործընթացում կարևորվում է մեծահասակի դերը, որը կարող է ներկայացնել երեխային ընդունելի վարքաձևեր, նորմեր, կանոններ, զարգացնել բարոյական ինքնագիտակցությունը: 8-9 տարեկանում ի հայտ է գալիս զգացմունքների տարբերակում՝ վատն ու լավը փախարինվում են տարբեր զգացմունքների գիտակցմամբ և արտահայտմամբ:

Կրտսեր դպրոցական տարիքում հաճախ հանդիպում ենք մի շարք դժվարությունների: Այդ դժվարություններից մեկը կապված է երեխայի համար դպրոցական անսովոր ռեժիմի հետ: Դժվարություններից է նաև, որը հաճախակի է հանդիպում առաջին դասարանցիների մոտ, ուսուցչի, դասընկերների և ընտանիքի անդամների հետ ունեցած փոխհարաբերությունների բնույթի հետ: Չնայած երեխաների նկատմամբ ունեցած բարի վերաբերմունքին ուսուցիչն, այնուհանդերձ, հանդես է գալիս որպես հեղինակավոր ու խիստ դաստիարակ: Սրա հետևանքով որոշ երեխաներ դառնում են խիստ, կաշկանդված, իսկ ուրիշները՝ չափից ավելի ազատ:

Դասարանում սովորողների փոխհարաբերությունները նորմալ են լինում այն դեպքում, երբ ուսուցիչը հավասարապես պահանջկոտ է բոլոր երեխաների նկատմամբ, երբ թույլերին խրախուսում է աշխատասիրության համար, իսկ ուժեղներին նկատողություն է անում ավելորդ ինքնավստահության համար: Այս ամենը հոգեբանական բարենպաստ մթնոլորտ է ստեղծում դասարանի կոլեկտիվի աշխատանքի համար: Ուսուցիչը խրախուսում է երեխաների ընդհանուր հետաքրքրությունների վրա հիմնված բարեկամությունը, նրանց այն կապերը, որոնք առաջանում են նույն շենքում ապրելու, նույն նստարանին նստելու և այլ արտաքին հանգամանքների հիման վրա:

Դպրոց ընդունվելու հետ միասին փոխվում է նաև երեխայի վիճակը ընտանիքում: Նա ստանում է նոր իրավունքներ և պարտականություններ: Դիտումները ցույց են տվել, որ ընտանիքների մեծ մասում երեխայի իրավունքները հարգվում և լրիվ կերպով բավարարվում են: Հաճախ նկատվում են նաև այսպիսի պատկեր. զգալով մեծերի բարի վերաբերմունքն ու կարիքները անմիջապես բավարարելու պատրաստակամությունը որոշ երեխաներ սկսում են չարաշահել իրենց դիրքը ընտանիքին կյանքի անպիսի ոճ պարտադրել, որտեղ իրենք են դառնում բոլորի ուշադրության կենտրոնում: Ընտանիքում կրտսեր դպրոցականի նկատմամբ ուշադրություն հանդես բերելու հետ միաժամանակ նրան պետք է ցույց տալ, որ ընտանիքի մյուս անդամները ևս պակաս կարևոր հոգսեր ու հետաքրքրություններ չունեն: Երեխան պետք է հաշվի նստի դրանց հետ և իր դպրոցական բախումները չափից ավելի կարևոր չհամարի ընտանեկան այլ գործերի հետ համեմատած:

Կրտսեր դպրոցականների փոխհարաբերությունների ամենաբնորոշ գծերից մեկն այն է, որ նրանց բարեկամությունը, որպես կանոն, հիմնվում է կյանքի արտաքին հանգամանքների և պատահական հետաքրքրությունների ընդհանրության վրա: Կրտսեր դպրոցականի գիտակցության զարգացման մակարդակը դեռևս այնպիսին չէ, որպեսզի նա հասակակցի կարծիքի վրա հենվելով կարողանա ճիշտ գնահատել ինքն իրեն: Կասկածից դուրս է 9-10 տարեկան երեխաները մեծ հետաքրքրություն են հանդես բերում այն գնահատականների նկատմամբ, որ իրենց տալիս են համադասարանցիները ճարպկության, հնարամտության ու արագ ըմբռնողության, համարձակության համար: Նրանք սուր ու տհաճ ապրումներ են ունենում, երբ այդ գնահատականները չեն համընկնում իրենց ցանկությունների և ակնկալիքների հետ: Բայց այդպիսի ապրումները լինում են կարճատև և հեշտությամբ կարող են թուլացվել կամ վերացվել չափահասների և հատկապես ուսուցիչների կողմից տրվող նոր գնահատականների ազդեցության տակ:

Կրտսեր դպրոցի առաջին տարիներին ուսուցիչը երեխայի համար միակ և անկոտրում հեղինակությունն է: Աշակերտի շփումը հիմնականում ուղղված է նրան, համադասարանցիներին նա ընդունում է ուսուցչի միջոցով, արժևորում է այն համադասարանցիներին, ում գնահատում է ուսուցիչը: Այդ պատճառով, ուսուցիչը որպես հեղինակություն կարող է ուղղորդել երեխայի հասարակական շփումները: Հետզհետե մեծանում է հասակակիցների հետ շփվելու պահանջը, որի բավարարման ընթացքում երեխան սկսում է հասկանալ առկա կանոնները, միջանձնային շփման նրբությունները :

Այսպիսով, կարելի է նկատել, թե որքան են կարևորվում ուսուցչի անձը և նրա շփման հմտությունները ուսումնական գործընթացում, քանի որ անհրաժեշտ անձնային որակների, մասնագիտական հմտությունների առկայության, ինչպես նաև արդյունավետ շփման, կառավարման ոճի շնորհիվ կարելի է խթանել երեխայի անձի զարգացումը, իսկ հակառակ դեպքում սահմանափակել այն:

1.2 Ծնողների ներգրավումը դպրոցական կյանքի մեջ

Երեխաները մեր ապագան են: Երեխաների կրթության իրականացման գործում մեծ դեր է կատարում ծնող-երեխա-դպրոց օղակը: Մեր հասարակությանն արժանի քաղաքացի դաստիարակելու նպատակով պետք է համագործակցեն ծնողները և ուսուցիչները: Կրթության արդիական մեթոդներն օգնում են, որ երեխան գիտելիքներ ստանա օգտագործելով իր բոլոր ընդունակությունները, ինչպես և վստահություն ձեռք բերի սեփական ուժերի նկատմամբ: Առանց ծնողների օգնության և աջակցության հնարավոր չէ լիարժեք արդյունքի հասնել: Ծնողների հետ շփումն օգնում է ուսուցչին տեղյակ լինի, թէ երեխայի հետ տանը ինչ է կատարվել, որն այս կամ այն կերպ ազդել է նրա հոգեբանության, վարքի, տրամադրության վրա: Դա օգնում է ուսուցչին ոչ միայն իմանալ, այլև հասկանալ և օգնել երեխային: Ինչու՞ չէ, այդ օգնության կարիքը զգում են ոչ նիայն երեխաները, այլև ծնողները: Նրանց անհրաժեշտ է գիտակցել, որ իրենք միայնակ չեն, իրենց կողքին են ուսուցիչները, մյուս ծնողները, ընկերները:

Կրթության ոլորտում ընտանիք-դպրոց համագործակցությունը խիստ կարևոր և հրատապ խնդիր է: Հաճախ մանկավարժները մեղադրում են ընտանիքին երեխայի դաստիարակության հարցում: Միևնույն ժամանակ ծնողները մեղադրում են մանկավարժին: Արդյունքում տուժում է երեխան:

Սուխոմլինսկին պնդում էր, որ <<երեխան իր հոր և մոր բարոյականության հայելին է>>: Ընտանիքից է կախված, թե ապագայում երեխան ինչպիսին կլինի և ինչ դիրք կզբաղեցնի հասարակության մեջ:

Ընտանիքը, որտեղ ծնվում է երեխան շատ կարևոր է և մեծ ազդեցություն է ունենում երեխայի դերի, փոխհարաբերությունների, հույզերի, համոզմունքների ձևավորման գործընթացում: Ընտանիքում մարդկանց բնավորությունը և փոխհարաբերությունների տեսակները խորը ազդեցություն են ունենում կրտսեր դպրոցականի զարգացման գործում և նրանցից յուրաքանչյուրը կարող է յուրօրինակ ազդեցություն ունենալ այդ գործում:

Ա. Ադլերը որպես անհատի ձևավորման կարևորագույն գործոն առանձնացնում է ընտանիքի կառուցվածքը: Երեխայի տարբեր դիրքերն այդ կառուցվածքի մեջ և համապատասխան տիպի դաստիարակությունը շատ հաճախ մեծ ազդեցություն են ունենում խնդիրների առաջացման վրա: Օրինակ՝ գերխնամքը հանգեցնում է կասկածամտության, մանկամտության և թերարժեքության բարդույթի զարգացման:

Կրտսեր դպրոցականի զարգացման հարցում կարևոր գործոն են հանդիսանում փոխհարաբերություններն ընտանիքում: Ընտանիքում երեխաներն ունենում են գրեթե միևնույն

ապրումները, ինչ որ իրենց ծնողները: Օրինակ՝ ծնողների չափազանց խստությունը, որոշ արժեքներ և այլն: Զնայած դրան յուրաքանչյուր երեխա ունի իր ապրումների և հարաբերությունների յուրօրինակ հավաքածուն: Յուրաքանչյուր ընտանիքում երեխաներին սովորեցնում են ինչպես ապրել, ինչպես լինել կազմակերպված, ինչ եղանակով կառուցել հարաբերությունները հակառակ սեռի հետ, ինչպես ծախսել դրամը, ում հետ ընկերություն անել, ինչպես վերաբերվել անարդարությանը և այլն:

Սա մի ժամանակաշրջան է, երբ մարդն առավել զգայուն է գիտելիքի յուրացման նկատմամբ: Հետևաբար բարենպաստ կրթական միջավայրի ապահովումը կարևոր է, քանի որ այս շրջանի բացերը թե՛ գիտելիքի ձեռքբերման, թե՛ միջավայրին հարմարվելու մեխանիզմների մշակման տեսանկյունից հետագայում դժվարությամբ և թերի են լրացվում: Շատ կարևոր և մեծ դերակատարություն ունի ծնողի աջակցությունը և օգնությունն երեխային կրթական միջավայրում ինտեգրվելու համար :

Ընտանիքը և դպրոցն այն երկու սոցիալական համակարգերն են, որոնց համագործակցությունից է կախված երեխայի դաստիարակության գործընթացի արդյունավետությունը: Ընտանեկան դաստիարակության շարունակականության ապահովումն էապես պայմանավորված է դպրոցի աշխատանքով: Դպրոցը չի կարող փոխարինել ընտանիքին, սակայն կարող է բարձրացնել նրա դերը դաստիարակության հարցում: Ցանկալի է, որ ընտանիքն ու դպրոցն աշխատեն նույն ուղղությամբ : Մանկավարժները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ուսուցիչները դժվարությամբ են փոփոխում իրենց գործունեության ձևը՝ կապված այն բանի հետ, որ չեն տիրապետում սովորողների և ծնողների հետ երկխոսության և համագործակցության մեխանիզմներին: Այդ համագործակցության արդյունավետությունը ուսուցչից պահանջում է անձնային որոշակի որակներ դպրոցի և մանկավարժական առաջավոր փորձի վերաբերյալ գիտելիքներ, մանկավարժական վարպետություն և էթիկա, հաղորդակցման հմտություն, գործընկերների, սովորողների և ծնողների հետ համագործակցելու կարողություն:

Դպրոց-ընտանիք և ծնող-երեխա համագործակցության արդյունքների որակի ցուցիչներ կարելի է համարել.

- սովորողների կրթվածության որակը,
- ուսուցիչների և դպրոցի ղեկավարության մասնագիտական մտահասությունը,
- ծնողների հոգեբանամանկավարժական գիտելիքների մակարդակը:

Դասղեկների ժողով-զրույցների, ժողով-պրակտիկումների, սեմինարների ընթացքում կարելի է իմանալ մանկավարժների կարծիքը ծնողների հետ համագործակցության նշանակության մասին: Իմանալով ընտանիքի դաստիարակչական ներուժը՝ յուրաքանչյուր դասարանի դասղեկը պետք է օգնի ծնողներին հաղթահարելու իրենց երեխաների հասունացման դժվարությունները:

Հետազոտությունների արդյունքում առանձնացվել են մի շարք մանկավարժական գործոններ, որոնք նպաստում են ուսուցիչների, ծնողների և երեխաների համագործակցության արդյունավետության բարձրացմանը:

Այդ գործոններն են՝

- ուսուցչի մարդասիրական կողմնորոշումը,
- ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ծնող, ծնող-երեխա համակարգում փոխվստահության մթնոլորտի ապահովումը, համատեղ գործունեության մեջ փոխըմբռնումը,
- ստեղծագործական-կրթական միջավայրի ստեղծումը,
- ուսուցիչների մասնագիտական մտահասությունը,
- մանկավարժական համագործակցության կառուցվածքի ճիշտ մոդելավորումը,
- փոխօգնության և փոխադարձ բարյացակամության մթնոլորտի ստեղծումը,

- ընդհանուր համաձայնության ձգտումը դաստիարակչական գործընթացի բոլոր փուլերում,
- դասղեկների՝ մանկավարժական համագործակցության մեթոդների տիրապետումը:

Հանրակրթական դպրոցում կրթության բովանդակության բարդացման, սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության օր-օրի ավելացման արդի պայմաններում, ոչ միայն դպրոցը, այլև երեխաներն են զգում ծնողների մանկավարժական գրագիտության անհրաժեշտությունը:Ուստի անհրաժեշտ է բարելավել ընտանիքի կրթադաստիարակչական ներուժը՝ դպրոցի աշխատանքային պլանում ծնողների հոգեբանամանկավարժական աջակցության ծրագրի ներկայացման, ինչպես նաև, որոշակի մանկավարժական պայմանների և ընտանիքի հետ համագործակցության նոր ձևերի և մեթոդների միջոցով:

Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավումը նպատակ ունի՝

- Առավել արդյունավետ դարձնել ընտանիք-դպրոց փոխազդեցության համակարգը ՝ բարձրացնելով փոխադարձ վստահությունը:
- Բարձրացնել աշակերտների ուսուցման արդյունքների համար ծնողների պատասխանատվությունը:
- Ծնողներին ավելի ակտիվորեն ներգրավվել դպրոցի գործունեության մեջ:
- Նպաստել ծնողների և ուսուցիչների խմբային աշխատանքի արդյունավետությանը:

Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավման համար անհրաժեշտ է՝ դպրոցի և ծնողների համագործակցության բովանդակության մեջ ներառել երեք հիմնական ուղղություններ.

1. Ծնողների մանկավարժահոգեբանական տեղեկացվածության բարձրացում :
2. Ուսումնադաստիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում:
3. Դպրոցի կառավարման գործընթացներում ծնողների մասնակցության մեծացում:

Այսպիսով մանկավարժական գործընթացում ընտանիքի հետ ուսուցչի հաղորդակցման արդյունավետությունն անմիջականորեն պայմանավորված է նրա հաղորդակցման մշակույթի մակարդակով:

Այսինքն՝ և՛ ծնողի, և՛ ուսուցչի համար էական նշանակություն ունի հաղորդակցման մշակույթի բարձր մակարդակը, որը դրսևորվում է մանկավարժական գործունեության և կրթական գործընթացի սուբյեկտների փոխհաղորդակցման մեջ:

Դպրոց-աշակերտ-ծնող միությունն ուղղված է դպրոցականի ներդաշնակ համակողմանի զարգացմանը, սովորելու ցանկությանը, իր ուժերի նկատմամբ հավատի ամրապնդմանը: Այս համագործակցությունը եռակողմ հսկայական ջանքերի արդյունք է:

Դպրոցն ու մանկավարժները պետք է օգնեն ծնողներին երեխայի դաստիարակության բարդ գործընթացում, սակայն չեն կարող մրցակցել ընտանիքի հետ: Հենց ընտանիքն է հանդիսանում երեխայի դաստիարակության և զարգացման ամենահզոր գործոնը, որի հետ խիստ անհրաժեշտություն է

համագործակցություն:

1.3 Ծնողական ժողովների կարևորությունը սովորողների կրթության գործում

Հաջողված է այն դասարանը, որի ղեկավարը հաճախակի հրավիրում է ծնողական ժողովներ, ներկայացնում է սովորողների առաջընթացի մասին, բնութագրում սովորողի հետ կապված ցանկացած հիմնախնդիր: Ծնողական ժողովները մերձեցնում են ուսուցիչներին և ծնողներին, ընտանիքին մոտեցնում են դպրոցին, օգնում որոշել երեխայի կրթության վրա ազդելու ամենաօպտիմալ ուղիները:

Հանդիպումների ժամանակ ծնողները համակարգված կերպով ծանոթանում են ընտանիքում և դպրոցում երեխաներին դաստիարակելու խնդիրներին, բովանդակությանը, ձևերին և մեթոդներին: Ծնողական ժողովները կարող են կառուցվել տարբեր ձևերով: Շատ հաճախ ուսուցչի կամ ծնողի սխալ խոսելը, ոչ ճիշտ վարվելակերպը երեխաներին հետ է շպրտում և ստեղծվում է կոնֆլիկտային իրավիճակ, որն ավելի բարդացնում է ծնող-երեխամանկավարժ-դպրոց համագործակցությունը: Այդպիսի իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է ճիշտ ծնողական ժողովներ վարել, որտեղ կկարողանանք կառուցողական մթնոլորտ ստեղծել և համատեղ աշխատանքի արդյունքում կշահի մեր սովորողը, վաղվա քաղաքացին: Ծնողական ժողովները պետք է կազմակերպել հետևյալ սկզբունքներով՝ . Ժողովների ժամանակ որոշել մեկ առավել կարևոր խնդիր, որը վերաբերում է դասարանի աշակերտներին և դրա հիման վրա կազմակերպել զրույցը ծնողների հետ: .Հատուկ ուշադրություն դարձնել դասարանում ծնողների աթոռների դասավորության վրա: Օրինակ , կարելի է սեղանները և աթոռները դասավորել շրջանաձև որպեսզի բոլոր ծնողները լավ տեսնեն և լսեն միմյանց: . Ժողովի ընթացքում կիրառել խաղեր և ծնողների համագործակցության կազմակերպման խմբային ձևեր: . Խնդրահարույց հարցերի քննարկման ժամանակ հենվել առավել կենսափորձ ունեցող ծնողների կյանքի և մանկավարժական փորձի, ծնողական կոմիտեի անդամների և դպրոցի խորհրդի կարծիքների վրա:/Կ. Դ. Ուշինսկի/ 9 Ծնողական ժողովների ժամանակ դասղեկը պետք է դրսևորի հետևյալ վարքագիծը. . Հանել սեփական լարվածությունը և տագնապը ծնողներին հանդիպելուց առաջ: . Խոսքի, ինտոնացիայի, ժեստերի և այլ միջոցներով ցույց տալ հարգանք և ուշադրություն նրանց հանդեպ: . Փորձել հասկանալ ծնողներին, ճիշտ որոշել խնդիրները, որոնք առավել անհանգստացնում են նրանց: . Ծնողների հետ հարկավոր է հանգիստ և բարեհամբույր խոսել: Կարևոր է, որ բոլոր աշակերտների, այդ թվում /ռիսկային խմբի/ ծնողները ժողովից գնան հավատով լցված դեպի իրենց երեխան: . Ծնողական ժողովի ընթացքում համատեղ աշխատանքի արդյունքը պետք է լինի այն, որ ծնողները դառնան ավելի վստահ այն բանում, որ իրենց երեխաների դաստիարակության հարցում կարող են հենվել դասղեկի և մյուս ուսուցիչների աջակցության և օգնության վրա: Եվ վերջապես ուսուցչի վարպետությունը կայանում է աշակերտների հետ փոխազդեցության կազմակերպման ձևերը, վերլուծելու կարողությունը, համոզմունքների արտահայտումը, առանց վիրավորելու աշակերտի տեսակետը, աշակերտի ներշնչման կարողությունը: Ուսուցչի մոտեցումից շատ բան է կախված: Ուսուցիչն է, որ կարող է ճիշտ ղեկավարելով աշակերտներին և ծնողներին , կկարողանա նրանց մեջ ձևավորել բարձր արժանիքներ, զարգացնել հետաքրքրությունը ուսման նկատմամբ:/Կ. Դ. Ուշինսկի/ Ինչպես ասել է Սուխոմլինսկին «Ցուրաքանչյուր երեխայի մեջ կա լավը, և դաստիարակության գործընթացը պետք է կառուցել դրականի վրա հենվելու սկզբունքի հիման վրա»:

1.4 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Տարիների աշխատանքային փորձը ցույց է տվել, որ տարրական դպրոցում ծնողները ավելի են ներգրավված ուսումնական գործընթացին: Հաճախակի ինքնակամ այցելում են դպրոց և դպրոց-ծնող-ուսուցիչ կապն ավելի ամուր է:

<u>Հետազոտության նպատակը.</u> Ընտանիք-դպրոց համագործակցության կարևորումն ու կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների ձևավորումն այդ համագործակցության պայմաններում:

Հետազոտությունն անց է կացվել Արարատի մարզի Լանջազատի միջնակարգ դպրոցի 4 դասարանի աշակերտների հետ: Հետազոտությանը մասնակցել են 30 աշակերտ, 30 ծնող և 6 մանկավարժ օգտագործելով հարցաթերթիկներ:

Հետազոտության շրջանակներում ուսուցիչների և մանկավարժների համար նախատեսված հարցաթերթերի միջոցով փորձել ենք պարզել թե՛ ծնողների, թե՛ մանկավարժների վերաբերմունքը կրտսեր դպրոցականի նկատմամբ, ինչպես նաև այն հանգամանքը, թե որքանով են նրանք կարևորում դպրոց-ընտանիք կապը և որքանով են նպաստում կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների ձևավորմանն ու կարգավորմանը:

Հետազոտությունը իրականացվել է մշակված հարցաթերթիկների հիման վրա: Հետազոտության շրջանակներում առաջին քայլով հարցում կատարեցինք աշակերտների շրջանում (Դիագրամ 1):



Հարցման արդյունքում ստացված տվյալների վերլուծությունից հանգեցիկ այն եզրակացության, որ կրտսեր դպրոցականները սիրում են շփվել հիմնականում նախապատվություն տալով հասակակիցներին, շփման բավարար մակարդակ ունեն նաև ծնողների և ուսուցիչների հետ: Երեխաները, որոնք ունեն միջանձնային հարաբերությունների ցածր մակարդակ ուսուցիչների և ծնողների հետ բացասական պատասխան են տվել նաև առաջին հարցին: Այս ամենից կարելի է ենթադրել , որ նրանք ինքնամփոփ են:

Հանգեցիկ այն եզրակացության, որ դպրոցի և ընտանիքի համագործակցությունը բավարար չէ կրտսեր դպրոցականի միջանձնային հաղորդակցման բավարար հմտությունների ձևավորման համար:

Հետազոտության շրջանակներում երկրորդ քայլով հարցում կատարեցինք ծնողների շրջանում (Դիագրամ 2):



Ծնողները ամենօրյա ակտիվ հաղորդակցում ունեն երեխայի հետ , սակայն փորձում են իրենք լուծել ծագած խնդիրները՝ երեխային մղելով հաղորդակցման ետին պլան: Բավարար չէ կապը դպրոցի և այլ ծնողների հետ: Հաղորդակցումը կրում է ֆորմալ բնույթ:

Հետազոտության շրջանակներում երրորդ քայլով հարցում կատարեցինք ուսուցիչների շրջանում (Դիագրամ 3):



Ուսուցիչները ակտիվ հետադարձ կապ հաստատում են երեխաների հետ, սակայն խուսափում են միջանձնային հարաբերություններից կապված ծնողների անձի հետ, իսկ կապը կրում է հիմնականում աշխատանքային բնույթ:

Հետազոտության ընթացքում պարզ դարձավ, որ շատ հաճախ ծնողները հաճախակի են քննարկում ուսուցիչների հետ ունեցած միջանձնային փոխհարաբերությունները, իսկ ուսուցիչները առավել պասիվ են և փորձում են խուսափել երեխայի հետ ծնողների ունեցած հարաբերությունները քննարկելուց: Ուսուցիչները նաև խուսափում են ծնողների հետ միջանձնային հարաբերություններից, իսկ շփումը կրում է աշխատանքային բնույթ:

Ծնողների մեծ մասը անմիջական մասնակցություն են ունենում երեխայի միջանձնային հարաբերությունների ժամանակ առաջացած կոնֆլիկտների հաղթահարմանը, ինչով ոչ թե օգնում են երեխային, այլ խոչընդոտում են նրա լիարժեք ինքնակայացմանը և ինքնադրսևորմանը:

Ի տարբերություն ծնողների, ուսուցիչները անմիջական մասնակցություն են ունենում միջանձնային հարաբերությունների ժամանակ առաջացած կոնֆլիկտների հաղթահարմանը միայն այն դեպքում, երբ նկատում են, որ այդ շփումը բացասական ազդեցություն է ունենում երեխայի վարքային դրսևորումների, արժեքային համակարգի ձևավորման վրա:

Եզրակացություն

Ծնող- ուսուցիչ կապի պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության բանալին է, իսկ ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը , ինչպես նաև դպրոցի ու ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի կրթությանն ու դաստիարակությանը

Ժամանակակից պայմաններում տեղի ունեցող գիտատեխնիկական առաջընթացի, տեղեկատվության արագ տարածումի, քաղաքական, սոցիալ-տնտեսական փոփոխությունների, բարոյական հարաբերություններում և արժեհամակարգի ոլորտում առկա տեղաշարժերի, ծնողների զբաղվածության աճի հետ մեկտեղ փոխվել են ուսուցիչ-երեխա, ծնող-երեխա, երեխա-ծնող-ուսուցիչ փոխհարաբերությունները: Այդ հարաբերությունները ստացել են նոր բովանդակություն և դրսևորումներ, որոնք այսօր կարիք կա վերաիմաստավորելու:

Կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների ձևավորման առանձնահատկությունների ուսումնասիրման արդյունքում եկանք հետևյալ եզրակացությունների.

- Կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների ձևավորման գործընթացում ծնողները դրսևորում են դաստիարակության ավտորիտար ոճը՝ բացասաբար ազդելով երեխայի ինքնադրսևորման և ինքնակայացման վրա:
- Ուսուցիչը անմիջական մասնակցություն ունենալով կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների ձևավորմանը ուղղորդում է երեխայի հասարակական շփումները:

- Տարրական դպրոցում կրտսեր դպրոցականների միջանձնային առողջ հարաբերությունների ձևավորմանը կնպաստեն մեր առաջադրած մանկավարժական պայմանները.
- Կրտսեր դպրոցականի ինքնահանաչողությունը համագործակցության հիմքում դնելը, միմյանց հարգելն ու ընդունելը
- Երեխայի ազատության և իրավունքների պաշտպանության ապահովում
- Կրթական մարդասիրական միջավայրի առկայություն
- Կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների կարգավորման գործում ուսուցչի և ծնողի համագործակցության առկայություն
- Ուսուցիչներին և ծնողներին մանկավարժահոգեբանական գիտելիքների տրամադրում՝ նրանց դաստիարակչական կոմպետենտության ապահովում
- Ծնողին ուսումնական գործընթացին մասնակից դարձնել

Ուսուցիչները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դառնում: Ծնողները բացառիկ դեր են խաղում երեխայի կյանքում. նրանք են կրում դրա զարգացման հիմնական պատասխանատվությունը: Ընտանիքը պետք է լինի համախոհների խումբ և գործի դպրոցի հետ համատեղ: Մանկավարժությունը պետք է դառնա գիտություն և՛ ուսուցիչների, և՛ ծնողների համար, ուստի կարևոր և հրատապ խնդիրներից է դպրոց – ընտանիք համագործակցությունը:

Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու. Ս. , Սահակյան Ա.Ս.,<<Մանկավարժություն>>, Երևան, Մանկավարժ, 2005, էջ 456

2.Արզումանյան Ս. Հոգեբանություն, Երևան, Զանգակ, 2003

3.Բալյան Ա.Ա., Սադյան Շ.Ա., Մանկավարժական էթիկա, Երևան, 2001

4. Բեջանյան Ա.Տ. <<Ընտանիքի և դպրոցի գործընկերային փոխազդեցությունը որպես կարևոր պայման երեխայի ներդաշնակ զարգացման գործում>>, Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում,21-րդ դարի մարտահրավերները, կանխման և հաղթահարման ուղիները, գիտաժողովի նյութերի ժողովածու.-Եր.: Մանկավարժ, 2016, 209էջ
5. Գևորգյան Մ., <<Մանկավարժական հաղորդակցության առանձնահատկությունները>>, Մանկավարժությունն, Գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2011, 64 էջ
6. Դալլաֆյան Ա.Հ. <<Դպրոց-ընտանիք համագործակցության ձևերը ժամանակակից դպրոցում>>, Մանկավարժության արդի խնդիրները. մարտահրավերներ և լուծումներ: Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու.-Եր.: Մանկավարժ, 2015, 336էջ
7. Թոփուզյան Ա.Օ. <<Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ>> Երևան, Լինգվա, 2009, 297 էջ
8. Թոփուզյան Ա.Օ. <<Ընտանեկան և դպրոցական դաստիարակության ինտեգրումը արդիական պահանջ է>>, Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում,21-րդ դարի մարտահրավերները, կանխման և հաղթահարման ուղիները, գիտաժողովի նյութերի ժողովածու.-Եր.: Մանկավարժ, 2016, 209էջ
9. Խոջոյան Լ. <<Ընտանիք-դպրոց համագործակցություն>>, Նախաշավիղ 1, գիտամեթոդական հանդես, 2017, 64 էջ
10. Леонтьев. А.А. – Москва-Нальчик : Эль-Фа, 1996

11. Макаренко А.С., Соч., Т.7,1952, с.311
12. Шибутани Т., Социальная психалогия; Ростов Н/Д. 1999, с. 539
13. 1.Կ.Դ .ՈՒշինսկի
14. «Քայլ առ քայլ»-ի չափորոշիչների կիրառումը դասարանում
15. . Նախաշավիղ 1 .2012 5. Վ. Դ. Սեմյոնով /Փոխազդեցություն դպրոցի և սոցիալական միջավայրի միջև
16. Վ.Դ. Սեմյոնով/ Մանկավարժություն

Հավելված **1**

Հարցարեր աշակերտների համար

1. Սիրու՞մ ես արդյոք ազատ ժամանակն անցկացնել շփվելով մարդկանց հետ:
ա . Այո
բ. Ոչ
գ. Չգիտեմ

2. Քեզ հուզող հարցերի մասին զրուցու՞մ ես ծնողների հետ:
ա. Այո
բ. Ոչ
գ. Երբեմն

3. Քեզ հուզող հարցերի մասին զրուցու՞մ ես ուսուցիչների հետ:
ա. Այո
բ. Ոչ
գ. Երբեմն

. Քեզ հուզող հարցերի մասին զրուցու՞մ ես ընկերների հետ:
ա. Այո
բ. Ոչ
գ. Երբեմն

5. Դժվարությունները, որոնք առաջանում են դասի ընթացքում կամ տանը պատմու՞մ ես արդյոք և՛ ուսուցիչներին, և՛ ծնողներին:
ա. Այո
բ. Ոչ
գ. Չգիտեմ

Հավելված **2**
Հարցաթերթ ծնողների համար

1. Յուրաքանչյուր օր պարբերաբար հստակ ժամանակով զրուցու՞մ եք երեխայի հետ:
ա. Այո
բ. Ոչ

2. Երեխայի հետ քննարկու՞մ եք արդյոք նրա ընկերների հետ ունեցած հարաբերությունները:
ա. Այո
բ. Ոչ

3. Երեխաների հետ քննարկու՞մ եք արդյոք ուսուցիչներին:
ա. Այո
բ. Ոչ

4. Անմիջական մասնակցություն ունենու՞մ եք երեխայի միջանձնային կոնֆլիկտների հաղթահարմանը:
ա. Այո
բ. Ոչ

5. Պարբերաբար կապ հաստատու՞մ եք ուսուցիչների, դպրոցի, ընկերների և նրանց ծնողների հետ:
ա. Այո
բ. Ոչ
գ. Երբեմն

Հավելված **3**

Հարցաթերթ ուսուցիչների համար

1. Դասի ընթացքում հատկացնու՞մ եք ժամանակ երեխայի հետ անձնական զրույց ունենալու համար:

ա. Այո

բ. Ոչ

գ. Երբեմն

2. Երեխայի հետ նրա անձնական խնդիրներից զրուցում եք ելնելով.

ա. Անհրաժեշտությունից

բ. Անձնական պատասխանատվությունից

գ. Իրավիճակից

3. Երեխաների հետ քննարկու՞մ եք արդյոք հարաբերությունները ծնողների հետ:

ա. Այո

բ. Ոչ

գ. Երբեմն

4. Անմիջական մասնակցություն ունենու՞մ եք երեխայի միջանձնային կոնֆլիկտների հաղթահարմանը:

ա. Այո

բ. Ոչ

գ. Մասնակի

5. Պարբերաբար կապ հաստատու՞մ եք այլ ուսուցիչների, ծնողների և ընկերների հետ:
ա. Այո
բ. Ոչ
գ. Մասնակի